

AUA Հայաստանի Ամերիկյան
Համալսարան

Խմբագրական ոճի ուղեցույց

Թարմացված՝ ապրիլ, 2026 թ.

Ներածություն

Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) խմբագրական ուժի ուղեցույցը մշակվել է համալսարանի պաշտոնական հաղորդակցության ոճական միօրինակությունն ապահովելու նպատակով: Այն սահմանում է ՀԱՀ-ում ընդունված մոտեցումները կետադրության, ուղղագրության, վերնագրերի, հապավումների և այլ կանոնների հետևողական կիրառման վերաբերյալ:

ՀԱՀ-ի «Newsroom» և «Insider» հարթակների համար մամուլի հաղորդագրություններ կամ հոդվածներ պատրաստելիս անհրաժեշտ է օգտագործել պարզ և հասկանալի խոսք: Նախադասությունները պետք է լինեն հակիրճ, իսկ պարբերությունները՝ հստակ ձևակերպված: Վերնագրերը պետք է լինեն կարճ, բայց միևնույն ժամանակ հետաքրքրաշարժ՝ ընթերցողի ուշադրությունը գրավելու նպատակով: ՀԱՀ-ը հիմնականում պատրաստում է նորությունների ժանրին պատկանող լրագրողական նյութեր (միջոցառումների մասին հայտարարություններ կամ դրանց վերաբերյալ անդրադարձներ), ինչպես նաև բնութագրական հոդվածներ, որոնք խորությամբ լուսաբանում են ՀԱՀ-ի և լայն հանրության համար հետաքրքրություն ներկայացնող իրադարձությունները, թեմաները և անհատներին:

Համալսարանի անվանումը և հապավումը

«Հայաստանի ամերիկյան համալսարան» անվանման մեջ մեծատառով գրվում է միայն «Հայաստանի» բառը: Համալսարանի անվան հապավումը՝ ՀԱՀ, կարող է կիրառվել տեքստում միայն այն դեպքում, երբ նախապես ներկայացվել է հապավման ամբողջական տարբերակը, և ընթերցողին պարզ է դրա նշանակությունը: Այս կանոնը կիրառելի է նաև համալսարանի պաշտոնական հաղորդակցության շրջանակում օգտագործվող մյուս բոլոր հապավումների դեպքում:

Ակադեմիական աստիճաններ

Ակադեմիական աստիճանների անվանումները գրվում են փոքրատառով, օրինակ՝ *բակալավրի աստիճան, մագիստրոսի աստիճան*:

Աստիճան շնորհող ծրագրերի անվանումները կիրառվում են երկու տարբերակով՝ ըստ լիցենզիայի և ՀԱՀ-ի կողմից ընդունված մեկնաբանությամբ:

Առաջին տարբերակի դեպքում ծրագրերի անվանումները գրվում են այնպես, ինչպես նշված է լիցենզիայում: Այս տարբերակը կիրառվում է պաշտոնական և իրավական հաղորդակցության մեջ՝ օրինակ պայմանագրերում, համաձայնագրերում, դիպլոմներում, հավաստագրերում և այլն:

Ստորև ներկայացված են ՀԱՀ-ում աստիճան շնորհող ծրագրերի անվանումները՝ ըստ լիցենզիայի.

- Կառավարում /ըստ ոլորտի/ (BAB)
- Միջմշակութային հաղորդակցություն /անգլերեն/ (BAEC)
- Քաղաքականություն և պետական կառավարում (BAPG)
- Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա (BSCS)
- Տվյալագիտություն (BSDS)
- Մեխատրոնիկա (BSES)
- Տնտեսագիտություն (BSE)
- Շրջակա միջավայրի և կայունության գիտություններ (BSESS)
- Քույրական գործ (BSN)
- Իրավագիտություն (LL.M.)
- Մարդու իրավունքներ և սոցիալական արդարություն (MAHRSJ)
- Անգլերեն և գրականություն (MATEFL)
- Լրագրություն (MAMJ)
- Գործարար վարչարարություն/կառավարում/ (MBA)
- Արդյունաբերական ճարտարագիտություն (MEIESM)
- Միջազգային հարաբերություններ և դիվանագիտություն (MAIRD)
- Քաղաքական կառավարում և քաղաքական վերլուծություն (MPA)
- Հանրային առողջություն և առողջապահություն (MPH)
- Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն) (MSCIS)
- Տնտեսագիտություն (MSE)
- Կառավարում և վերլուծություն (MSMA)

Երկրորդ տարբերակի դեպքում ծրագրերի անվանումները գրվում են ՀԱՀ-ի կողմից ընդունված մեկնաբանության համաձայն: Այս տարբերակը կիրառվում է սոցիալական մեդիայի հրապարակումներում, հոդվածներում, տեղեկատվական կամ գովազդային նյութերում, ՀԱՀ-ի տարածքում գտնվող ցուցանակների և դռների վրա փակցված գրություններում, համալսարանի ներքին հաղորդակցության շրջանակում և այլն:

- Քաղաքական կառավարման և վերլուծության մագիստրոսի ծրագիր
- Հանրային առողջապահության մագիստրոսի ծրագիր
- Համակարգչի և տեղեկույթի գիտության մագիստրոսի ծրագիր
- Տնտեսագիտության մագիստրոսի ծրագիր
- Կառավարման և վերլուծության մագիստրոսի ծրագիր

Ստորև ներկայացված են ՀԱՀ-ում աստիճան շնորհող ծրագրերի անվանումները՝ ըստ համալսարանի կողմից ընդունված մեկնաբանության:

Ծրագրի անվանման տարբերակի ընտրության հետ կապված հարցերի դեպքում կարող եք դիմել Հաղորդակցության գրասենյակ հետևյալ էլ. հասցեով՝ communications@aua.am:

- Գործարարության բակալավրի ծրագիր
- Անգլերենի և հաղորդակցության բակալավրի ծրագիր
- Քաղաքականության և պետական կառավարման բակալավրի ծրագիր
- Համակարգչային գիտության բակալավրի ծրագիր
- Տվյալագիտության բակալավրի ծրագիր
- Ճարտարագիտության բակալավրի ծրագիր
- Տնտեսագիտության բակալավրի ծրագիր
- Շրջակա միջավայրի և կայունության գիտությունների բակալավրի ծրագիր
- Քույրական գործի բակալավրի ծրագիր
- Իրավագիտության մագիստրոսի ծրագիր
- Մարդու իրավունքների և սոցիալական արդարության մագիստրոսի ծրագիր
- Անգլերենի՝ որպես օտար լեզվի դասավանդման մագիստրոսի ծրագիր
- Լրագրության մագիստրոսի ծրագիր
- Գործարար կառավարման մագիստրոսի ծրագիր
- Արդյունաբերական ճարտարագիտության և համակարգերի կառավարման մագիստրոսի ծրագիր
- Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության մագիստրոսի ծրագիր

ՀԱՀ-ի վկայագիր շնորհող ծրագրերը հետևյալն են.

- Թարգմանչի որակավորման վկայագիր շնորհող ծրագիր
- Անգլերենի՝ որպես օտար լեզվի դասավանդման վկայագիր շնորհող ծրագիր
- Զբոսաշրջության և հյուրանոցային գործի կառավարման վկայագիր շնորհող ծրագիր
- Կառավարման վկայագիր շնորհող ծրագիր
- Տվյալների վերլուծաբանի վկայագիր շնորհող ծրագիր

Կոչումներ

Գիտական և ակադեմիական կոչումները գրվում են փոքրատառով, օրինակ՝ *պրոֆեսոր*, *համակից պրոֆեսոր*, *դոկտոր*: Նույն կերպ՝ փոքրատառով են գրվում նաև պաշտոնական կոչում չհանդիսացող այլ բնորոշումները, ինչպես՝ *դասընթացավար*, *հրավիրյալ դասախոս* և այլն:

Պաշտոններ

Պաշտոնների անվանումները գրվում են փոքրատառով, օրինակ՝ նախագահ, փոխնախագահ, դեկան, ուսումնական հարցերով փոխնախագահ:

Հանձնաժողովների, խորհուրդների և այլ ներկայացուցչական մարմինների անվանումներ

Հանձնաժողովների, հանձնախմբերի, խորհուրդների և այլ ներկայացուցչական մարմինների ամբողջական պաշտոնական անվանումների առաջին բառը գրվում է մեծատառով, օրինակ՝ Հոգաբարձուների խորհուրդ, Դասախոսական սենատ:

Ներքին կանոնակարգեր և ընթացակարգեր

Ներքին կանոնակարգերի և ընթացակարգերի անվանումների առաջին բառը գրվում է մեծատառով, օրինակ՝ Ուսանողի վարքագծի կանոնակարգ, Ուսումնառության կասեցման և վերընդունելության ընթացակարգեր:

Ընդունելության թեստեր

Ընդունելության թեստերի անվանումները գրվում են անգլերեն՝ ըստ իրենց պաշտոնական հապավումների, օրինակ՝ TOEFL iBT, IELTS Academic, GRE, GMAT: Այս հապավումները ճանաչելի են ընթերցողների լայն շրջանակի համար, ուստի դրանց հայերեն տարբերակները կամ ամբողջական անվանումները ներկայացնելու անհրաժեշտություն չկա:

Համալսարանի մասնաշենքեր և սենյակներ

Համալսարանի մասնաշենքերի անվանումների առաջին բառը գրվում է մեծատառով: Եթե անվանման մեջ նշված է անհատի անունը և/կամ ազգանունը, ապա դրանք նույնպես գրվում են մեծատառով: Եթե կառույցի անվան մաս կազմող անհատի անունը և/կամ ազգանունը արևմտահայերեն են, կիրառվում են արևմտահայերենի ուղղագրական կանոնները՝ բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ անհատը նախընտրում է իր անվան գրության մեկ այլ տարբերակ:

Օրինակ՝

- Փարամագ Աւետիսեան մասնաշենք
- Գ. Զորջ և դուկո. Քարոլան Ս. Նաջարեան մասնաշենք
- Վարդգես և Յասմիկ Պարսամ մասնաշենք
- Մաշիգեան ուսանողական կացարան
- Զորյան ինստիտուտ և ՀԱՀ բանավոր պատմության կենտրոն
- ՀԱՀ կենտրոն

Բացառություն է կազմում ՀԱՀ-ի հիմնական մասնաշենքը, որտեղ «հիմնական» բառը գրվում է փոքրատառով:

Համալսարանի սենյակների, սրահների և դահլիճների անվանումները գրվում են փոքրատառով, եթե հատուկ անուններ չեն պարունակում:

Օրինակ՝

- դասախոսական սրահ
- մեծ դահլիճ
- փոքր դահլիճ
- Գեորգ և Սեսիլ Քեշիշեան ուսանողական միություն

- Միհրան և Էլիզապեթ Աղբաբեան սրահ
- Մանուկեան սրահ
- Ազեան արվեստի պատկերասրահ
- Ալպերթ և Թերրի Պեզճեան ճաշարան
- Ֆլո Թոմասեան Սփեք համատեղ ուսուցման տարածք
- ՀԲԸՄ Փափազեան գրադարան

Ֆակուլտետներ, հետազոտական կենտրոններ և գրասենյակներ

Համալսարանի ֆակուլտետների, հետազոտական կենտրոնների և գրասենյակների անվանումների առաջին բառերը գրվում են մեծատառով:

Ստորև ներկայացնում ենք ՀԱՀ-ի ֆակուլտետների ամբողջական անվանումները.

- Զաւեն և Սոնիա Ազեան բնագիտության և ճարտարագիտության ֆակուլտետ
- Հումանիտար և հասարակական գիտությունների ֆակուլտետ
- Մանուկեան Սիմոն գործարարության և տնտեսագիտության ֆակուլտետ
- Ժիրայր և Փաթրիշա Թրփանճեան առողջապահական գիտությունների ֆակուլտետ

ՀԱՀ-ի հետազոտական կենտրոնների ամբողջական անվանումները ներկայացված են ստորև.

- Յակոբեան բնապահպանական կենտրոն
- Կիրառական լեզվաբանության հետազոտական կենտրոն
- Ճարտարագիտական հետազոտական կենտրոն
- Իրավագիտական ռեսուրսների կենտրոն

- Մեղրիկեան աչքի հիվանդությունների կանխարգելման կենտրոն
- Փոլ Աւետիսեան գործարարության հետազոտման և զարգացման կենտրոն
- Թրփանճեան հասարակական գիտությունների ինստիտուտ
- Հանրային հարցերի բարոյագիտության կենտրոն
- Զուարթ Աւետիսեան Օնանեան առողջապահական ծառայությունների հետազոտման և զարգացման կենտրոն
- Լրագրության գերազանցության կենտրոն

Ներկայացնում ենք նաև ՀԱՀ-ի գրասենյակները.

- Համալսարանական հետազոտությունների և գնահատման գրասենյակ
- Ընդունելության գրասենյակ
- Շրջանավարտների հետ կապի գրասենյակ
- Հաղորդակցության գրասենյակ
- Ուսանողական և ուսումնական հարցերի գրասենյակ
- Ուսանողական գործերի համակարգման գրասենյակ
- Զարգացման գրասենյակ
- ՀԱՀ շենքերի շահագործման, ծառայությունների և միջոցառումների բաժին
- Մարդկային ռեսուրսների կառավարման գրասենյակ
- Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների ծառայություն
- Ֆինանսական ծառայությունների բաժին
- Ուսանողների ֆինանսական աջակցության գրասենյակ
- Նախագահի գրասենյակ
- Դրամաշնորհային ծրագրերի և տեխնոլոգիաների փոխանցման գրասենյակ
- Շարունակական կրթության բաժին